

Շրջակա միջավայրի նախարարության

«Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ

---

# ԱԳՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

# 2023

---

Ապրիլի երրորդ տասնօրյակ

Տեղեկագիրը կազմել է ագրոօդերևութաբանության բաժինը՝ մասնագիտացված ագրոօդերևութաբանական կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա։

Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Սուրենյան

## *ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

*Ապրիլի երրորդ տասնօրյակում օդի միջին ջերմաստիճանը հանրապետության շրջանների զգալի մասում բարձր է եղել նորմայից 2-3 աստիճանով:*




*Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները դիտվել են ապրիլի 28-ին. Տավուշում գրանցվել է +22…+24$^{0}$C, Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +17…+19$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +23…+25$^{0}$C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +30…+32$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +23…+24$^{0}$C, Շիրակում՝ +15…+19$^{0}$C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ +16…+19$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +20…+21$^{0}$C, Գեղարքունիքում՝ +14…+19$^{0}$C, Լոռիում՝ +18…+22$^{0}$C, Արմավիրում՝ +23…+24$^{0}$C, Արարատում՝ +24…+25$^{0}$C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ +14…+16$^{0}$C, նախալեռներում՝ +16…+21$^{0}$C:*

*Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանները դիտվել են 22-ին և 23-ին. Տավուշում գրանցվել է +6…+8$^{0}$C (Դիլիջան՝ +1$^{0}$C), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ +1…+3$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +5…+7$^{0}$C, Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ +8…+11$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +4…+6$^{0}$C (Սիսիան՝ 0$^{0}$C), Շիրակում՝ -3…+2$^{0}$C, Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 0…+3$^{0}$C, նախալեռնային շրջաններում՝ +3…+5$^{0}$C, Գեղարքունիքում՝ -2…+2$^{0}$C, Լոռիում՝ 0…+3$^{0}$C (Տաշիր՝ -3$^{0}$C), Արմավիրում՝ +6…+8$^{0}$C, Արարատում՝ +7…+9$^{0}$C, Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 0…-1$^{0}$C, նախալեռներում՝ +4…+6$^{0}$C:*




Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը Շիրակում կազմել է 40-47մմ (143-169%), Լոռիում՝ 25-41մմ (74-151%), Տավուշում՝ 20-21մմ (66-69%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 31-33մմ (93-134%), նախալեռներում՝ 14-16մմ (50-55%), Գեղարքունիքում՝ 8-30մմ (33-118%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 31-35մմ (80-83%), նախալեռներում՝ 18մմ (90%), Արմավիրում՝ 16-20մմ (85-114%), Արարատում՝ 12-22մմ (66-100%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 19մմ (50%), նախալեռներում՝ 18մմ (90%), Սյունիքում՝ նախալեռնային շրջաններում՝ 8-32մմ (35-83%), հովտային շրջաններում՝ 6մմ (33%):

Հանրապետությունում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները գրանցվել են ապրիլի 22-25-ն ընկած ժամանակահատվածում. լեռնային և առանձին նախալեռնային շրջաններում -4…+1$^0$C, Արագածոտնի նախալեռներում, Արարատյան դաշտում՝ +2…+6$^0$C, Սյունիքի հովտային շրջաններում՝ +9$^0$C աստիճան:



*Վեգետացիոն ցուցիչի արժեքն ըստ արբանյակային տվյալների*

*( ապրիլի երրորդ տասնօրյակ)*




*Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ*



























## *Աշնանացան ցորեն*

*Առանձին հովտային շրջաններում բազմամյա միջին ժամկետներին մոտ աշնանացան ցորենը հասկակալել է:*

*Լեռնային շրջաններում աշնանացան ցորենը ցողունակալել է, գարնանացան գարին և գարնանացան ցորենը՝ ծլել:*

*Լեռնային շրջաններում աշնանացանի բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 17-27սմ, հովտային և նախալեռնային շրջաններում՝ 30-49սմ, տասնօրյակային աճը կազմել է 9-12սմ:*

*Մերձավանում աշնանացանի դաշտում հողի արդյունավետ խոնավության պաշարներն 0-10սմ շերտում կազմել է 24մմ, 0-20սմ շերտում՝ 53մմ, 0-30սմ շերտում՝ 86մմ, որն անցյալ տասնօրյակի համեմատ նվազել է 5-9մմ-ով:*

*Նախալեռնային շրջաններում կապարվել է եգիպտացորենի ցանք:*





***Պտղատուներ, խաղող***

*Պտղատուների աճն ու զարգացումն ընթացել է միջին ժամկետներին մոտ:*

*Հովտային շրջաններում շարունակվել է կորիզավորների պտղի ձևավորումը, լեռնային շրջաններում հնդավորների բողբոջները բացվել են, նախալեռնային շրջաններում՝ ծաղկել:*

*Արարատյան դաշտում շարունակվել է խաղողի ծաղկաբույլերի առաջացումը:*

***Կարտոֆիլ***



*Լեռնային շրջաններում շարունակվել է կարտոֆիլի տնկման աշխատանքները:*

*Նախալեռնային շրջաններում կարտոֆիլը ծլել է, տեղ-տեղ առաջացել են կողային ընձյուղները:*

***Խոտաբույսեր***

*Լեռնային շրջաններում շարունակվել է կորնգանի ցողունի աճը:*

*Հովտային շրջաններում առաջացել է առվույտի ծաղկաբույլերը, բարձրությունը տասնօրյակի վերջին կազմել է 42սմ, տասնօրյակային աճը կազմել է 12սմ:*